ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ _____ *Ս. Փիլոյան*

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Լոռու մարզի Մարալանջ գյուղի Հ. Թումանյանի անվան հիմնական դպրոց

ուսումնական հաստատության անվանումը, դասարան

Նարինե Եղիազարյան

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2022 - 2023 » ուսումնական տարի

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(դասարանի ընդհանուր բնութագիրը) Դասարանի կազմը՝ 6 աշակերտ: Դասարանը համախմբված է, տիրում է առողջ և ջերմ մթնոլորտ: Աշակերտները ընկերասեր են, աչքի են ընկնում միմյանց օգնելու բարձր գիտակցությամբ:

2. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվողաշխատանքները ուստարվա ընթացքում

1. ՈՒշադրության կենտրոնում պահել և մշտապես հետևելդպրոցում սահմանված կարգ ու կանոնին:
2. Կարևորել մաքրությունը, անձնականհիգիենան,կարգապահությունը և ճշտապահությունը:
3. Դրական վերաբերմունք ձևավորել ընտանեկանսովորույթների,ազգային ավանդույթների նկատմամբ:
4. Անցկացնել կանխարգելիչ զրույցները՝ինչպես խուսափելբնական աղետներից:

3.1 Հոգևոր դաստիարակություն կարևորել կրոնը յուրաքանչյուրի կյանքում;նշելով՝համախմբող և հայապահպան նշանակությունը:

3.2 Գեղագիտական դաստիարակություն Կրթել և դաստիարակել աշակերտներին նրանց մեջ գեղեցիկը գնահատելու և արժևորելու ունակությունները:

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն յուրաքանչյուր աշակերտի գիտակցության մեջ սերմանել՝սեր հարգանքը դեպի Հայոց Բանակ:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն Արժևորել սպորտը և այն մցնել յուրաքանչյուր աշակերտի առօրյա,դարձնելով այն պարտադիր բաղադրիչ առողջ ապրելակերպի:

3.5 Աշխատանքային դաստիարակություն բացատրել աշխատանքի կարևորությունը յուրաքանչյուր ձևավորման գործում:

3.6 Բնապահպանական դաստիարակություն առավել հանգամանորեն աշակերտներին ծանոթացնել բնության հետ:

4. Դպրոց-ընտանիք կապը անցկացնել միջոցառումներ ծնողների և աշակերտների մասնակցությամբ: Ծնողներին ներգրավել բոլոր տեսակի դասարանական աշկատանքների մեջ:

ԴԱՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ

Անցկացման ժամկետը	Միջոցառման անվանումը	Անցկացման տեղը
	Գիտելիքի օր	դպրոց
	Անկախության օր	դպրոց
	Ուսուցչի տոն	դպրոց
	Ամանոր	դպրոց
	Բանակի օր	դպրոց
	Տյառնընդառաջ	դպրոց
	Գիրք նվիրելու օր	դպրոց
	Մարտի 8	դպրոց
	Ապրիլի 7	դպրոց
	Ապրիլի 24	դպրոց
	Հաղթանակի օր	դպրոց
	Անկախության տոն	դպրոց

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը	Նպատակը	Ուսումնական շաբաթը	Կատարման ժամկետը
«Բարև ես եմ»	Նախապես կազմված հարցարանի միջոցով ծանոթանալ աշակերտների նախասիրություններին,խառնվածքին:	1-ին շաբաթ	
Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում	Մշակել կանոններ դպրոցում իրենց իրավունքների և պարտականությունների մասին:	2-ին շաբաթ	
Ինչ մասնագիտություն ընտրել	Ուղղորդել աշակերտներին ապագա մասնագիտության ընտրության հարցում, ներկայացնել տարբեր մասնագիտություններ,ցույց տալ դրանց դերը մարդու կյանքում	3-րդ շաբաթ	
«Հոչակագրից մինչև անկախության հանրաքվե»	Զրույցի միջոցով ներկայացնել պատմական իրադարձությունները,արժևորել անկախության արժեքը պետության կայացման գործում:	4-րդ շաբաթ	
Պահպանենք դպրոցական գույքը	Ձևավորել խնամքով վերաբերմունք դպրոցի գույքի նկատմամբ:	5-րդ շաբաթ	
Համավարակը և հասարակությունը	Խորհել և վերլուծել համավարակի ընթացքում հասարակության մոտ դրական և բացասական փոփոխությունները	6-րդ շաբաթ	
Ուսուցչի կերպարը, դերը իմ կյանքում	Անցկացնել անանուն սոցհարցում անհատական թերթիկներով և պարզել աշակերտների մոտեցումը ուսուցիչներին:Հանձնարարել կազմել ուսուցիչների մասին քառյակներ,գրել բացիկների վրա նվիրել ուսուցիչներին:	7-րդ շաբաթ	
Գրքերի անծայրածիր աշխարհում	Պարզել,թե ովքեր են սիրում գիրք կարդալ,ինչ գրքեր են կարդում,կազմակերպել որևէ գրքի միասնական ընթերցում և քննարկում:	8-րդ շաբաթ	
Աշնանային գունապնակ	Դասարանի աշնանային ձևավորում,այցելություն մոտակա զբոսայգի:	9-րդ շաբաթ	
Հայրենիքը սկսվում է իմ ծննդավայրից	Հանձնարարել կազմել տեղեկատու քարտեզ Լոռու մարզի զբոսաշրջային վայրեր,նշելով ճանապարհին գտնվող բոլոր օբյեկտները:	10-րդ շաբաթ	
Գեղագիտական ճաշակ	Զարգացնել սովորողների մոտ գեղեցիկը գնահատելու ունակություն և ճաշակ:Այցելություն թատերական ներկայացման:	11-րդ շաբաթ	

Հայաստանի պատմամշակութային ժառանգությունը	Նպաստել հայրենաճանաչության բարձրացմանը: Արժևորել անցյալի ձեռքբերումներն ու հաղթանակները:	12-րդ շաբաթ	
Հանդուրժող վարքի սկզբունքները	Վերհանել հանդուրժող մարդուն բնորոշ առանձնահատկությունները: Զնավորել հանդուրժող վերաբերմունք	13-րդ շաբաթ	
Անակնկալների տոնածառ,դասարանի ամանորյա ձևավորում	Զնավորել հարգանք ու ընկերասիրություն միմյանց նկատմամբ,խթանել ստեղծագործական մտածողությունը:	14-րդ շաբաթ	
Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում	Մտորել բացթողումների և ձեռքբերումների շուրջ:Գրել ինքնաանդրադարձ,ազնվորեն ներկայացնել բացթողումները:	15-րդ շաբաթ	
Երկրորդ կիսամյակի անելիքներ	Հստակեցնել երկրորդ կիսամյակի անելիքների ժամանակացույցը:Խորհրդակցել և հաշվի առնել սովորողների կարծիքը միջոցառումների և այլ աշխատանքների վերաբերյալ:	16-րդ շաբաթ	
Պարտքն ու նվիրվածությունը հայրենիքին	Որպես ապագա զինվոր ու քաղաքացի ձևավորել գաղափարապես հասուն սերունդ:Հրավիրել դպրոցի շրջանավարտներից 44օրյա պատերազմի մասնակից տղաներին, կազմակերպել քննարկում:	17-րդ շաբաթ	
Կոնֆլիկտներ,առաջացումը,ընթացքը և կանխարգելումը	Ելնելով տարիքային առանձնահատկությունից ներկայացնել իրավիճակներ,դիտել ֆիլմերից հատվածներ,միասին գտնել ելք:	18-րդ շաբաթ	
21-րդ դարիհայ երիտասարդի կերպարը	Մտորել ու բացահայտել այսօրվա երիտասարդի կերպարի դրական ու բացասական կողմերը իրենց իսկ աչքերով:	19-րդ շաբաթ	
Ողջ մնալու արվեստը	Հրավիրել դպրոցի ռազմագիտության ուսուցչին և բուժքրոջը կազմակերպել տարբեր արտակարգ իրավիճակներ և ներկայացնել արագ կողմնորոշվելու հմտությունները:	20-րդ շաբաթ	
Քրիստոնեական ազգային տոները	Վերլուծել հունվար-փետրվար ամիսների ազգային տոները, ձևավորել քրիստոնեական տոների նկատմամբ հարգանք, դաստիարակել առաքինի քրիստոնյա:	21-րդ շաբաթ	
Բնական աղետները և մարդը	Ներկայացնել բնական աղետները,դրանց առաջացման պատճառները և հետևանքները,պաշտպանության միջոցները:	22-րդ շաբաթ	
Գիտե՞ք արդյոք	Սովորեցնել ինչպես առաջին օգնություն ցույց տալ մարդուն ցանկացած իրավիճակում:	23-րդ շաբաթ	
Բացահայտենք մեր տաղանդավոր դասընկերներին	Խթանել շնորհալի երեխաներին ինքնադրսևորվելու,ավելի համարձակ դառնալու համար:	24-րդ շաբաթ	

Գարունը Վանաձորում	Զնավորել դասարանը քաղաքը պատկերող գարնանային նկարներով,պատրաստել բացիկներ մայրերի,քույրերի ու տատիկների համար:	25-րդ շաբաթ	
Գեղեցիկի դրսևորումները արվեստում	Այցելություն թատրոն, կինո, պատկերասրահ,լսել երաժշտություն կատարելվերլուծություն,մտորել գեղեցիկի առկայության մասին առօրյայում:	26-րդ շաբաթ	
Ճանաչենք հայրենիքի յուրաքանչյուր անկյունը	Հավաքել ու ձևավորել նյութեր Արցախի պատմամշակութային հուշարձանները ալբոմի համար:	27-րդ շաբաթ	
Ինչպես կառուցվեց Ծիծեռնակաբերդը	Ֆիլմի դիտում և քննարկում,աշակերտների նախագիտելիքների վերհանում:	28-րդ շաբաթ	
Սիրելի բանաստեղծների ստեղծագործությունները	Կազմակերպել ցերեկույթ և ունկնդրել դասական և ժամանակակից պոետների,բացահայտել կապը:	29-րդ շաբաթ	
Տարիքային հոգեբանական թեստեր	Տարբեր թեստերի միջոցով(վեցյակ,ֆոկալ օբյեկտներ,խնձորներ) դիտարկել աշակերտների վարքի փոփոխությունները:	30-րդ շաբաթ	
Արդյոք ամեն ինչ անում եմ իսկապես սովորելու համար	Զարգացնել գիտելիքների նկատմամբ աշակերտների հետաքրքրությունը:	31-րդ շաբաթ	
Շաբաթօրյակի կազմակերպում դասարանում և դպրոցի բակում	Զարգացնել աշխատանքային կարգապահություն,խնամք շրջապատի և գեղեցիկ միջավայրի նկատմամբ:	32-րդ շաբաթ	
Ինքնաանդրադարձ	Հանձնարարել գրել վերլուծական անդրադարձ տարվա ընթացքում իրենց կատարած աշխատանքի, ձեռք բերած գիտելիքների մասին:	33-րդ շաբաթ	
Ինչ տվեց ինձ դպրոցը այս մեկ տարում	Լսել բոլորի կարծիքները,քննարկել,հետագայում ավելի ճիշտ քայլեր ձեռնարկելու համար:	34դ շաբաթ	